



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«06» յունիստիսբեր 2018թ. N 150-Ա

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի**

**N 144-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կանոնադրության 16-րդ կետի 2-րդ ենթակետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2018 թվականի նոյեմբերի 22-ի N 144-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1. Հրամանով հաստատված N 1 հավելվածի /այսուհետ՝ N 1 հավելված/աղյուսակի 1-ին տողից հանել «ՃՄԱ ակադեմիկոս, ՀՀ վաստակավոր ճարտարապետ» բառերը:
2. N 1 հավելվածի աղյուսակի 2-րդ տողում «Պատմական հուշարձանների վերականգնման ճարտարապետների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ» բառերը փոխարինել «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ» բառերով:
3. N 1 հավելվածի աղյուսակի 3-րդ տողից հանել «տնտեսական գիտությունների թեկնածու», «ՀՀ վաստակավոր ճարտարապետ» բառերը:
4. N 1 հավելվածի աղյուսակի 4-րդ տողից հանել «ՀՀ վաստակավոր ճարտարապետ» բառերը:
5. N 1 հավելվածի աղյուսակի 5-րդ տողից հանել «ՀՀ վաստակավոր ճարտարապետ» բառերը:

6. N 1 հավելվածի աղյուսակի 6-րդ տողից հանել «ճարտարապետության դոկտոր» բառերը:

7. N 1 հավելվածի աղյուսակի 7-րդ տողից հանել «ճարտարապետության թեկնածու, դոցենտ» բառերը:

8. Հրամանով հաստատված N 2 հավելվածի /այսուհետ՝ N2 հավելված/ աղյուսակի 2-րդ տողից հանել «Տնտեսական գիտությունների դոկտոր» բառերը, «ԵՇՀԱՀ» հապավումը փոխարինել «ՃՇՀԱՀ» հապավումով:

9. N 2 հավելվածի աղյուսակի 4-րդ տողում «Տեխնիկական գիտությունների թեկնածու» բառերը փոխարինել «Կամուրջչին» ՓԲԸ նախագծային բյուրոի ղեկավար» բառերով:

10. N 2 հավելվածի աղյուսակի 6-րդ տողից հանել «Տեխնիկական գիտությունների թեկնածու» բառերը:

11. N 2 հավելվածի աղյուսակի 7-րդ տողից հանել «Տեխնիկական գիտությունների դոկտոր» բառերը:

12. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/6/2018



ԱՎԵՏԻՔ ԷԼՈՅԱՆ

Signed by: ELOYAN AVETIK 3304750558

Ա. ԷԼՈՅԱՆ

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018 թ.  
ք. Երևան